

В данной статье обсуждаются методы и особенности преподавания темы “Армянские освободительные движения в 16-19 вв.”. В статье выражается мысль о том, что данные темы могут способствовать национальному самосознанию учеников.

## The teaching of topics in the Armenian liberation movements in 16-19th centuries at schools

A.B.Arstamyan

### Summary

This article discusses the teaching methods and characteristics of Armenian liberation movements in 16-19th centuries, at school. Here the idea that these topics can be best contribute to the education of students in Armenian spirit is discussed.

## ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՆՈՒՆ ԱՐԴՅՈՒՆՈՒՅԹ

1(25) 2012

ՎՏ 347(479.243)

Քաղաքացիական իրավունք

## ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆ ՈՒ ԱՐԳԵԼՈՒՄԸ ԼՂՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐքՈՒՄ

Ն.Վ.Սարգսյան

Նվիրատվությունը որպես քաղաքացիական իրավունքի հնագույն ինստիտուտներից մեկը՝ հիմք է մեկ անձի կողմից գույքի նկատմամբ իրավունքը մյուսի սեփականությանը հանձնելու համար:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի /պատուհան՝ քաղ. օր/ 594-րդ հոդվածը նվիրատվության պայմանագիր է ճանաչում այն պայմանագիրը, որով մի կողմը /նվիրատուն/ մյուս կողմին /նվիրատուի/ սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք կամ իրեն /նրբորդ անձին/ ուղղված գույքային իրավունք /պահանջ/, ազատում կամ պարտավորվում է ազատել իր կամ նրբորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտավորությունից:

Համաձայն նշվածի՝ նվիրատվությունը կարող է հանդես գալ և՛ ռեալ պայմանագրի, և՛ կրնսենսատուալ պայմանագրի ձևով: Այսինքն, եթե պայմանագրով նվիրատուն մյուս կողմին՝ նվիրատուին, անհատույց գույք է հանձնում, ապա նվիրատվության պայմանագիրը ռեալ է, իսկ եթե նվիրատուն պարտավորվում է հետագայում հանձնել գույք կամ գույքային իրավունքներ, ապա պայմանագիրը կրնսենսատուալ է:

Նվիրատվության պայմանագիրը պայմանագրային պարտավորություններում առանձնանում է մի շարք բնորոշ հատկանիշներով: Դրանք են՝ պայմանագրի անհատուցելիությունը, նվիրատուի գույքի ավելացումը, նվիրատուի գույքի ավելացումը՝ նվիրատուի գույքի ծավալի նվազեցմամբ, նվիրատուի՝ նվիրատուին գույքի հանձնման կամ պարտավորությունից ազատելու մտադրության առկայությունը և նվիրատուի՝ նվիրը ընդունելու համաձայնությունը: Հիշյալ հատկանիշներն իրենց համակցությամբ կարելոր են նվիրատվության պայմանագրի համար և դրանցից որևէ մեկի բացակայությունը կիանգեցնի նվիրատվության պայմանագրի անվավերության:

Քաղ. օր-ի 598-րդ և 599-րդ հոդվածներով նախատեսված են նվիրատվությունը սահմանափակելու և արգելելու մասին նորմերը: Այսպես, իրավաբանական անձն իր տիրապետման ներքո գտնվող գույքը կամ դրա կառավարման իրավունքը սեփականտիրոց համաձայնությամբ կարող է նվիրել, եթե օրենքով այլ բան սահմանված չէ: Բայց եթե գույքը գտնվում է ընդհանուր համատեղ սեփականության ներքո, ապա անհրաժեշտ է սեփականության բոլոր մասնակիցների համաձայնությունը: Այս շեշտումով քաղ. օր-ի 599-րդ հոդվածը միաժամանակ մատնանշում է 198-րդ հոդվածով /համատեղ սեփականության ներքո գտնվող տիրապետելը, օգտագործելը և տնօրինելը/, նախատեսված կանոնների պահպանման

պահանջը:<sup>1</sup> Իսկ համաձայն 198-րդ հոդվածի՝ համատեղ սեփականության մասնակիցներն ընդհանուր գույքը միասին տիրապետում և օգտագործում են, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Կարևոր չէ, թե մասնակիցներից ով է կնքել գույքը տնօրինելու գործարք՝ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է բոլոր մասնակիցների համաձայնությամբ: Սա իիմք է տախի յուրաքանչյուր մասնակցի՝ ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ կնքել, եթե նրանց համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: Տրամարանական է նաև, որ համատեղ սեփականության տնօրինման գործարքը մնացած մասնակիցների պահանջով կարող է անվավեր ճանաչվել, եթե գործարք կնքող մասնակիցն անհրաժեշտ լիազորություններ չունի, հատկապես եթե ապացուցվի, որ գործարքի մյուս կողմն իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար այդ մասին:

Հստ քաղ. օր-ի 599-րդ հոդվածի 2-րդ կետի՝ երրորդ անձանց հանդեպ նվիրառուի փոխարեն նրա պարտականությունների կատարմամբ նվիրառությունն իրականացվում է օրենսգրքի 351-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված կանոնների պահպանմամբ: Իսկ 351 հոդվածի 1-ին կետում նշվում է. «Պարտապանը կարող է պարտավորության կատարումը դնել երրորդ անձի վրա, եթե օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից կամ դրա էլությունից չի բխում պարտավորությունն անձամբ կատարելու պարտապանի պարտականությունը: Այդ դեպքում պարտատերը պարտավոր է ընդունել պարտապանի փոխարեն երրորդ անձի կողմից պարտավորության կատարումը»:<sup>2</sup>

Քաղ. օր-ի 599-րդ հոդվածի համաձայն՝ երրորդ անձանց հանդեպ նվիրառուի փոխարեն պահանջի իրավունքի նվիրառությունն իրականացվում է օրենսգրքի 397-401-րդ, 403 և 404-րդ հոդվածներով նախատեսված կանոնների պահպանմամբ: Հիշյալ հոդվածները ներառված են օրենսգրքի Գլուխ 25-ում /Անձանց փոփոխվելը պարտավորության մեջ/ և սահմանում են ինչպես պարտատիրոջ իրավունքների այլ անձի անցնելու հիմքերն ու կարգը, այլև դրանց ծավալը, ապացույցները, առարկությունները, պահանջի զիջման ձևը: Մասնավորապես, 401-րդ հոդվածը /Պարտապանի առարկություններն ընդդեմ նոր պարտատիրոջ պահանջի/ սահմանում է, որ պարտապանն իրավունք ունի նոր պարտատիրոջ պահանջի դեմ ներկայացնել առարկություններ, որոնք նա ունեցել է սկզբնական պարտատիրոջ դեմ՝ նոր պարտատիրոջը իրավունքների անցման մասին ծանուցում ստանալու պահին: Իսկ հոդված 403-ը /Պահանջը զիջելու պայմանները/ մատնանշում է միանգամից երկու նոր:

«1. Պարտատիրոջ պահանջի զիջումն այլ անձի թույլատրվում է, եթե դա չի հակասում օրենքին, այլ իրավական ակտերին կամ պայմանագրին:

2. Առանց պարտապանի համաձայնության պահանջի զիջումն այն պարտավորությամբ, որում պարտատիրոջ անձն էական նշանակություն ունի պարտապանի համար, չի թույլատրվում»:<sup>3</sup>

Առաջին դեպքում, ինչպես տեսնում ենք, սահմանափակումը վերապահում է պարունակում հետևյալ շեշտումով՝ եթե այն չի հակասում օրենքին: Երկրորդ դեպքում պարտապանի համաձայնությունը պարտադիր է համարվում:

Պահանջը զիջելու ձևը /404-րդ հոդված/ սահմանում է, որ հասարակ գրավոր կամ նոտարական ձևով կնքված գործարքի վրա հիմնաված պահանջը պետք է զիջվի նույն ձևով: Բացի այդ, պետական գրանցման ենթակա իրավունքներ պարունակող գործարքով պահանջի զիջումը պետք է գրանցվի այլ իրավունքների գրանցման համար սահմանաված կարգով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Կարևոր է նաև այս հոդվածի 3-րդ կետով նախատեսվող նորմը, ըստ որի՝ օրդերային արժեթղթով պահանջի զիջումը կատարվում է այդ արժեթղթի վրա փոխանցագիր կատարելու միջոցով: Դա իր հերթին կատարվում է օրենսգրքի 149-րդ հոդվածի /Իրավունքներն արժեթղթով փոխանցելը/ 3-րդ կետի դրույթով, համաձայն որի՝ «օրդերային արժեթղթով իրավունքները փոխանցվում են այդ արժեթղթի վրա փոխանցագիր /ինդուստրիալ կատարելու միջոցով»:<sup>4</sup>

<sup>1</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգրքը ԼՂ հում կիրարկման է դրված 2001թ. մայիսի 18-ից՝ համաձայն «Հայաստանի հանրապետության 1998 թվականի քաղաքացիական օրենսգրքը Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում կիրարկման մեջ դնելու մասին» ԼՂ օրենքի:

<sup>2</sup> Տե՛ս՝ [www.arlis.am](http://www.arlis.am), «Հայաստանի հանրապետության քաղաքացիական օրենսգրք»:

<sup>3</sup> Նոյն տեղում:

<sup>4</sup> Նոյն տեղում:

Հասլկանշական է, որ այս դեպքում փոխանցագրողը /ինդուստրի/ պարտավաճառատվություն է կրում ոչ միայն իրավունքի գոյության, այլ նաև դրա իրականացման համար:

Կան իրավունքներ, որոնք չեն կարող անցնել այլ անձանց: Այս նորմը պարունակվում է 398-րդ հոդվածում և շեշտվում է, որ պարտատիրոջ անձի հետ անխօնի իրաված իրավունքների՝ ներառյալ ալիմնոտի և կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջների, անզնելն այլ անձի չի թույլատրվում: Ուշագրավ դրույթներ է պարունակում նաև 400-րդ հոդվածը */Նոր պարտատիրոջ իրավունքների ապացույցները/*: Օրինակ, պարտապանն իրավունք ունի մինչև պահանջը տվյալ անձին անցնելու վերաբերյալ ապացույցներ ներկայացնելով՝ նոր պարտատիրոջ օգտին պարտավորությունը չկատարել: Օրենսդիրը հնարավոր համարելով պացույցներ չներկայացնելու տարրերակը, տվյալ դեպքում ճիշտ է վարվել՝ մտղնելով իիշյալ դրույթը: Միաժամանակ օրենսդիրը նոյն հոդվածում իրավացներն անհրաժեշտ է համարել հետևյալ նորմի շեշտումը. «Պահանջն այլ անձի զիջած պարտատիրոջ պարտավոր է նոր պարտատիրոջը հանձնել պահանջի իրավունքը հավաստող փաստաթյութեր և հաղորդել պահանջի իրականացման համար նշանակություն ունեցող տեղեկություններ»:<sup>1</sup>

Քաղ. օր-ի 599-րդ հոդվածի 4-րդ կետը հուչում է, որ երրորդ անձանց հանդեպ նվիրառուի պարտը նվիրատուին փոխանցնելու միջոցով նվիրատվությունը կատարվում է օրենսգրքի 406-րդ և 407-րդ հոդվածներով նախատեսված կանոնների պահպանմամբ: Քաղ. օրի 406-րդ հոդվածի համաձայն պարտապանը կարող է իր պարտը այլ անձի փոխանցնել միայն պարտատիրոջ համաձայնությամբ, որի դեպքում կիրավում են նոյն օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետներում ամրագրված կանոնները: Ուշագրավ է 407-րդ հոդվածի սահմանումը. «*Նոր պարտապանն իրավունք ունի բնդրելս պարտատիրոջ պահանջի ներկայացնելի սուպերվություններ, որոնք հիմնված են պարտատիրոջ և սկզբնական պարտապանի հարաբերությունների վրա»:<sup>2</sup> Այսինքն՝ առարկությունները չեն կարող հիմնվել նոր ծագող /ծագած/ հարաբերությունների վրա, որն իր հերթին սահմանափակում է նոր պարտատիրոջ հավակնությունները:*

Քաղ. օր-ի 599-րդ հոդվածի 5-րդ կետով առոշինչ է համարվում ներկայացուցիչն տրված նվիրատվության կատարման լիազորագիրը, որում նշված չէ նվիրառուն և սահմանված չէ նվիրատվության առարկան: Սա արդեն չպիտի դիտարկել սահմանափակման համատեքստում, որովհետև խոսքը տվյալ դեպքում նվիրառուի ու նվիրատվության առարկայի բացակայության մասին է:

Վերոնշյալներից մասնավորապես հետևում է, որ նվիրատվության մերժմանը զուգահեռ, օրենքը սահմանում է նաև գործարքի սահմանափակումներ: Իրավաբանական անձի տիրապետման ներքո գտնվող գույքը կամ դրա կառավարման իրավունքը սեփականտիրոջ համաձայնությամբ նվիրելու իրավազորությունը առավելապես պատկանում է պետական, համայնքային, բաժնետիրական ընկերություններին: Ընդ որում, հարկ է նշել, բաժնետիրական ընկերությունների դեպքում սահմանափակումները վերաբերում են միայն անշարժ գույքին, բանզի շարժական գույքին նրանք տիրապետում են ինքնուրույն ձևով:

Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ ինչպես սկզբում նշեցինք, իրավաբանական անձն իր տիրապետման ներքո գտնվող գույքը կամ դրա կառավարման իրավունքը սեփականտիրոջ համաձայնությամբ կարող է նվիրել, եթե օրենքով այլ բան սահմանված չէ: Տվյալ դեպքում իրավաբանական անձինք հանդիսանում են համայնքային ենթակայության տուկ գտնվող հիմնարկները, որոնց տնօրինման իրավունքը ամրագրված է գույք: Նվիրատվության սահմանափակումներն այս իրավաբանական անձանց նկատմամբ ևս վերապահումով են արփում, որովհետև սեփականտիրոջ համաձայնությունը ոչ միշտ է պահանջվում: Հիմնարկը փաստացի իրավագոր չէ առանց սեփականտիրոջ համաձայնության՝ իրեն տնտեսական վարման հանձնված անշարժ գույքը վաճառել, նվիրել կամ գրավ դնել: Մնացած գույքը նա կարող է տնօրինել ինքնուրույն, բացառությամբ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված դեպքերի:

Նվիրատվությունն արգելելը և գործարքի սահմանափակման տարատեսակ է: Համաձայն օրենսգրքի 598-րդ հոդվածի, մասնավորապես, փոքրահասակների ու անզործունակ ճանաչված բաղարացիների անունից նրանց օրինական ներկայացուցիչներին արգելվում է նվիրատվություն կատարել: Այսինքն, եթե չի լրացնել բաղարացու 14 տարին, կամ եթե դատարանի կողմից բաղարացին անզործունակ է ճանաչվել, ապա նրանց օրինական ներկայացուցիչները /ծնողները,

<sup>1</sup> Նոյն տեղում:

<sup>2</sup> Նոյն տեղում:

խնամակալները, հոգաբարձուները/ չեն կարող նվիրատվության պայմանագրի կողմ հանդիսանալ: Փոքրահասակները՝ 6-14 տարեկանները, կարող են կնքել միայն մանր կենցաղային, նոտարական վավերացում չպահանջող գործարքներ: Նրանց կողմից կնքված ինքնուրույն գործարքներով զույրային պատասխանատվությունն ընկնում է ծնողի, խնամակալի կամ հոգաբարձուի վրա՝ «Եթե՞ չապացուցեն, որ պարտավորությունն իրենց մեղքով չի խախտվել» /Հոդված 29, կետ 3/:

Ինչպես ՀՀ-ում, ԼՂ-ում նույնպես նախատեսվում է նվիրատվության չափի սահման: «Հայատանի Հանրապետության քաղաքացիական իրավունքում» /նրկրորդ մաս/ արված մենքնարանմամբ՝ ՀՀ կառավարությունը 1993թ. փետրվարի 17-ին ընդունել է որոշում, համաձայն որի՝ պաշտոնի բերումով ստացված նվերներն անձնական չեն, պատկանում են պետությանը: Բայց եթե նվերներն անձնական բնույթը ունեն կամ բարձրարժեք չեն, այսինքն չեն զերազանցում պաշտոնատար անձի աշխատավարձի հնգապատիկը, ապա կարող են թողնվել նվեր ստացողի մոտ:<sup>1</sup> Նկատի առնելով, որ որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը նույնարդում է ընդունել, ինչպես նաև հաշվի առնելով, որ ԼՂ Գերազույն Խորհրդի 1992թ. հունիսի 6-ին ընդունած որոշմամբ՝ մինչև սեփական սահմանադրության և օրենքների ընդունումը ՀՀ գործող օրենսդրությունը և օրենսդրական ակտերը Ղարաբաղում գործում են, ուստի ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշումը լիարժեքորեն կիրարկելի է նաև ԼՂ-ում: Նկատենք, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգիրքը ևս տարբերակում է նվազագույն աշխատավարձի հնգապատիկը զերազանցող «սովորական նվերներո» մյուս նվիրաչափերից: Ընդ որում, ռուսաստանյան քաղ. օր-ում մասնավորապես նշվում է, որ խնամակալին կամ հոգաբարձուին արգելվում է նվիրառված գույքի եկամուտները տնօրինել՝ առանց համապատասխան մարմինների նախնական համաձայնության:<sup>2</sup> ԼՂ քաղ. օր-ի 39-րդ հոդվածով *Անամարկյալի գույքը տնօրինելը* ևս սահմանվում է, որ խնամակալության ու հոգաբարձության մարմինների նախնական համաձայնությամբ խնամակալը կամ հոգաբարձուն կարող են խնամարկյալի գույքի կառավարումից հասանելիք եկամուտները ծավանել ի շահ նրա: Սուսաց խնամակալության և հոգաբարձության մարմինների նախնական համաձայնության՝ դա կարող է իրականացվել միայն խնամարկյալի ապրուստի ապահովման նպատակով: Սա թերևս ավելի համարժեք մոտեցում է, որովհետև լրիվությամբ չի սահմանվածում խնամակալի կամ հոգաբարձուի իրավունքը խնամարկյալի գույքը տնօրինելիս: Մյուս կողմից, չի հստակեցվում խնամարկյալի ապրուստի ապահովման նպատակով եկամուտների ծախսման չափը, որը կարող է սպառնել գույքի կառավարումից ստացված եկամուտներն ամբողջությամբ: Մեր կարծիքով, ավելի տիպական կլիներ, եթե հիշյալ հոդվածում «**ապրուստի ապահովման**»-ը փոխարինվեր «**կենսապահովման**» բառով, նկատի առնելով նաև, որ վերջինս իմաստային առումով ավելի լայնաշերտ բար է:

Օրենսգրքի 598-րդ հոդվածի 2-րդ կետով, միևնույն ժամանակ, արգելվում է պետական և տնտեսական ինքնակառավարման մարմիններին կատարել նվիրատվություն՝ կապված իրենց պաշտոնների կամ ծառայողական պարտականությունների հետ: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասչֆ» ԼՂ օրենքի, համայնքի ղեկավարն իրականացնում է նաև պետության կողմից պատվիրակված լիազորություններ /Հոդված 32, 20-22 կետեր/, ուստի թե՛ նաև, և թե՛ պետական ծառայողը, որոնք աշխատավարձ են ստանում պետական բյուջեից, չեն կարող պետքութեան կատարել նվիրատվություններ: Նմանապես, նրանք չեն կարող իրենց ծառայողական պարտականությունների հետ կապված՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից ստանալ նվիրատվություններ, քանզի դրա մեջ պարունակվում են կոռուպցիայի տարրեր: Դա հատուկ շեշտվում է նաև օրենսգրքում. «**Նվիրատվության պայմանագրին վերաբերող այսպիսի նորմ նախատեսելն ինքնանպատակ չէ:** Այն յուրատեսակ միջոց է պայրարելու համար պաշտոնատար անձանց կողմից իրենց պաշտոններական դիրքի շարագահումների դեմ»:<sup>3</sup>

<sup>1</sup> Տես՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք», Երկրորդ մաս, Եր. համալս. իրատ., Ե., 2001, էջ 118:

<sup>2</sup> Տես՝ Гражданский Кодекс РФ 2011-2012 - последняя редакция, [www.grazkodeks.ru](http://www.grazkodeks.ru):

<sup>3</sup> Տես՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք», Երկրորդ մաս, Եր. համալս. իրատ., Ե., 2001, էջ 118:

Հիշյալ անձանց արգելվում է նվերներ տալ և ստանալ հենց իրենց պաշտոնական դիրքի կամ ծառայողական պարտականությունների հետ կապված, որը կարող է նպատակամղված լինել որևէ գործողություն կատարելուն կամ որոշում կայացնելուն: Տվյալ արգելքը չի տարածվում այն մյուս դեպքերի վրա, երբ նվիրատվությունը չի հանգեցնում հիշյալ անձանց ծառայողական գործունեությանը:

Հատկանշական է, որ օրենքը չի կարգավորում այն հնարավոր դեպքերը, երբ որևէ ծառայության դիմաց շնորհակալավարձը խոշոր չափեր է կազմում: Ասենք, եթե հանգագործությունը կանխվուի և քաղաքացուն վերահաս վտանգից փրկվուի համար քաղաքացին ի երախտագիտություն իրավապահ մարմնին թանկարժեք գույք /ավտոմեքենա, կահույք և այլն/ է նվիրաբերում: Քաղ. օր.-ի 605-րդ հոդվածի */Նվիրաբերություն/* 5-րդ կետը սահմանում է, որ իրադրության վիճակին հնարավոր նվիրաբերության գույքի օգտագործումը նվիրաբերողի սահմանած նպատակին չհամապատասխանելու դեպքում, այլ նպատակով կարող է օգտագործվել միայն նվիրաբերողի համաձայնությամբ, իսկ եթե վերջինս մահանում է կամ իրավաբանական անձը լուծարվում է՝ դատարանի վճռով: Ընդ որում հոդվածի 6-րդ կետով իրավունք է վերապահում նվիրաբերողին, նրա ժառանգներին կամ այլ իրավահաջորդին՝ վերացնել նվիրաբերությունը:<sup>1</sup> Մեր կարծիքով, այս դրույթը հակասության մեջ է գտնվում սույն հոդվածի 3-րդ կետի հետ, որովհետև նվիրառուի հանձնառությունը ներկա դեպքում ենթադրում է գույքի օգտագործում ըստ նշանակության: Միշտեն, եթե նվիրաբերությունն արվել է երախտագիտական մղումներով, ինչպես, օրինակ, իրավապահ մարմնին տրված արժեքավոր նվերը, ապա գույքի նպատակային օգտագործման պահանջ կարծես թե չի ծագում: Այս սրամաբանությամբ, չի կարող արգելվել ֆիզիկական անձի կողմից գույքի նվիրատվությունը, քանզի այն հասցեազրված է կառուցին, այլ ոչ թե կոնկրետ անձի: Վերոհիշյալ դրույթը, մեր կարծիքով, օրենսդրական խմբագրման կամ հստակեցման կարիք ունի:

Քաղ. օր.-ի 598-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ առևտրային կազմակերպությունների միջև հարաբերություններում նվիրատվությունը նույնպես արգելվում է: Օրենսդիրն այս նորմը սահմանելիս, թերևս նկատի է առնլ այն հանգամանքը, որ առևտրային կազմակերպություններում անհատույց գործարքները չեն դիտվում ակնկալվող եկամտի կամ շահույթի շրջանակում ու չեն բլուր ընկերության ընդհանուր շահերից: Նվիրատվությունները միաժամանակ կարող են ստեղծել հակամրցակցային միջավայր՝ խոշնդոտ հանդիսանալով ընկերության հետագա կայացմանն ու զարգացմանը:

Նվիրատվության սահմանափակումներն ու արգելումը, սակայն, չպետք է շփոթեն պարտի ներման հետ: Այս առնչությամբ ուս իրավագեն վ. Մոլոստովան, մասնավորապես, գտնում է, որ առևտրային կազմակերպությունների միջև նրենմն պարտի ներում կիրառվում է, ինչն էլ իր ենթին հարկային խնդիրներ է հարուցում:<sup>2</sup>

ԼՂՀ հարկային օրենսդրությունը մերժում է նման գործարքները առևտրային կազմակերպությունների միջև: Եթե պարտի ներում՝ կիրառվում է խորհրդարանի կողմից օրենքի ուժով արտոնություններ տալու ձևը: Այս կերպ, օրինակ, ԼՂՀ Ազգային ժողովը 21.03.2003թ. ընդունել է օրենք «Վահե Կարապետյան» ՓԲԸ նկատմամբ արտոնություն սահմանելու մասին, համաձայն որի՝ հիշյալ ընկերությունն ազատվել է 2003թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված շահութահարկի, եկամտահարկի, ավելացված արժեքի հարկի, գույքահարկի, ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների, բնապահպանական վճարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված տույժերի և տուգանքների ու պարտադիր սոցիալական ապահովության վճարների վճարումից:

### Գրականություն

- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիր», «Տիգրան Մեծ» ՓԲԸ հրատարակչություն., Եր., ՀՀ կառավարության պաշտոնական հրատարակություն, 429 էջ:
- [www.arlis.am](http://www.arlis.am), «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիր»:
- Гражданский Кодекс РФ 2011-2012 - последняя редакция, [www.grazkodeks.ru](http://www.grazkodeks.ru):

<sup>1</sup> Տես՝ [www.arlis.am](http://www.arlis.am), «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիր»:

<sup>2</sup> Տես՝ "Էնուերգֆ", № 476, 09.07.2004.

4. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք», Երկրորդ մաս, Եր., համալս. իրատ., Եր., 2001:
5. ԼՂՀ օրենքների ժողովածու /Պաշտոնական հրատարակություն/:
6. "Էպիգրաֆ", № 476, 09.07.2004.
7. ԼՂՀ Սահմանադրություն, 10.12.2006:
8. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրը», 01.07.1998, /ՀՀ պաշտոնական տեղեկագիր, թիվ 22 /55/, 21.09.1998:

Ограничение и запрещение дарения в гражданском кодексе НКР.

**Н.Г.Саркисян**

*Резюме*

Дарение, как вид безвозмездной сделки, включает в себя также положения по ограничению и запрещению дарения.

Юридическое лицо с согласия собственника может подарить находящуюся в его ведении вещь, либо право ведения, если законом ничего иного не предусмотрено.

Однако если имущество находится в общей совместной собственности, то необходимо согласие всех участников собственности.

Параллельно с отклонением дарения, закон устанавливает также ограничения сделки.

Преимущественные правомочия дарить с согласия собственника имущество или право управления имуществом принадлежит государственным, общины и акционерным предприятиям. Запрещение дарения является совершенно новой нормой в Гражданском кодексе НКР. Согласно 598 статье кодекса, в частности, законным представителям несовершеннолетних и граждан, признанных недееспособными запрещается осуществлять дарение от их имени.

Ограничение и запрещение дарения не должны смешиваться с прощением долга. Нередко коммерческие организации применяют практику прощения долга, что может породить налоговые проблемы.

Налоговое законодательство отклоняет подобные сделки между коммерческими организациями. Взамен этого, в силу закона применяется форма предоставления льгот со стороны парламента.

NKR civil code limitation and danation.

**N.H.Sargsyan**

*Summary*

The donation as the type of voluntary action also includes the provisions of donation limitation and prohibition. The legal person can grant as per the owner the property or the right of its management, which is in his possession, in case anything else is not defined by the law. But if the property is in the possession of the common joint ownership, then the consent of all the participants is required.

The law also defines action limitations along with the donation decline. The donating competency of the property or the right of its management as per the owner, which is in the possession of the legal person, mainly belongs to the state, community, joint-stock organizations.

The prohibition of the donation is definitely considered as a new standard of the NKR civil code. As per 598 article of the legislation, particularly the legal representatives of young children and unemployed recognized citizens are prohibited to donate in their name.

The limitations and prohibition of donation must not be confused with the debt forgiveness. The debt forgiveness is applied often among the commercial organizations, what can cause the tax problems.

The NKR tax legislation declines the similar actions between the commercial organizations. Instead of that in use is the form of assigning the law forced privileges by the NKR council.